« Հաստատված է»
09.11.2021թ. -ի, հրաման թիվ 72
«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ գործադիր տնօրեն
Ա. Հարությունյան

# Անշարժ գույքի կառուցապատման, վերակառուցման, վերանորոգման, բարեկարգման նպատակով տրամադրվող վարկերի Տեղեկատվական ամփոփագիր

| | |
|---|---|
| Վարկերի տրամադրման աշխարհագրական շրջանակը | Հայաստանի Հանրապետություն |
| Վարկառու | 23-65 տարեկան << քաղաքացի |
| Տրամադրվող գումարի մեծությունը | Նվազագույնը՝ 1.5 մլն. << դրամ , առավելագույնը՝ 30 մլն. << դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար |
| Տարեկան անվանական տոկոսադրույք (հաստատուն) | << դրամի դեպքում՝ 14% - 18%<br>ԱՄՆ դոլարի դեպքում՝ 11% - 14% |
| Փաստացի տոկոսադրույք | << դրամի դեպքում՝ 15.1% - 31.8%<br>ԱՄՆ դոլարի դեպքում՝ 11.8% - 27.3% |
| Վարկի ժամկետը | 12 ամսից մինչև 120 ամիս |
| Վարկի գումարի և տոկոսագումարի մարումները | Հաճախորդի նախընտրությամբ՝ կազմվում է ժամանակացույցը, մարումները՝ հավասարաչափ կամ անուփտետ եղանակով *<br>- դիֆերենցված (վարկի գումարը վճարվում է հավասարաչափ, տոկոսագումարը նվազում է՝ հաշվարկվելով մնացորդի նկատմամբ, վարկի գումարի և տոկոսագումարի մարումները կատարվում են ամսական պարբերականությամբ) |
| Վարկային հաշվի սպասարկման միջնորդավճարները | Վարկի փաստացի մնացորդի դիմաց կիրառվում է ամսեկան վճար.<br>- մինչև 10.0 մլն << դրամ - 0.04% ամսական;<br>- մինչև 20.0 մլն << դրամ - 0.02% ամսական;<br>- սկսած 20.0 մլն << դրամից - 0.01% ամսական: |
| Մինչև 15 մլն << դրամ պայմանագրեր՝ վարկի մայր գումարի վաղաժամկետ մարման համար | Տուգանք չի կիրառվում |
| 15 մլն << դրամը գերազանցող պայմանագրեր՝ վարկի մայր գումարի վաղաժամկետ մարման դեպքում | Պայմանագրային տարվա որևէ պահի վաղաժամկետ մարում կարող է իրականացվել այդ պայմանագրային տարվա համար մարման ժամանակացույցով նախատեսված վարկի մայր գումարի չափով: Պայմանագրային տարի է համարվում կրեդիտավորման պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածը, նշված գումարից գերազանցելու դեպքում սահմանվում է տուգանք՝<br>ա.առավելագույնը 0.6 տոկոսի չափով, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության առաջին տարվա ընթացքում,<br>բ. առավելագույնը 0.4 տոկոսի չափով, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության երկրորդ տարվա ընթացքում,<br>գ. առավելագույնը 0.2 տոկոսի չափով, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության երրորդ տարվա ընթացքում. |
| Վարկառուի այլ ծախսերը | Գրավի գնահատման**, վերագնահատման, նոտարական, պետական գրանցման և ձևակերպման, ապահովագրական և դրանց հետ կապված ծախսեր |
| Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները | Անշարժ գույք (ապահովվածության՝ գնահատված շուկայական արժեքի, առավելագույնը 80%-ի չափով), այլ գրավ, երաշխիք, երաշխավորություն, ինչպես նաև << քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ գրավ: |
| Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետը | Մինչև 3 աշխատանքային օր |
| Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ | անվանական տոկոսադրույքի հաշվարկումը չի դադարում և, միաժամանակ, ժամկետանց վարկի մնացորդի նկատմամբ գանձվում է տույժ՝ օրական 0.06%: |
| Ժամկետանց տոկոսագումարի գծով հաշվարկվող տույժ | ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ գանձվում է տույժ՝ օրական 0.07%: |

| | |
|---|---|
| Լրացուցիչ ծառայություններ | • հերթական մարումից 20 աշխատանքային օր առաջ քաղվածքի տրամադրում;<br>• Վարկային պայմանագրերի երկարաձգման համար վճարվում է սակագին՝ 20000 ՀՀ դրամ;<br>• Վարկի մարման ժամանակացույցի փոփոխության համար վճարվում է սակագին 5000 ՀՀ դրամ գումարի չափով;<br>• Գրավի առարկա հանդիսացող գույքի սեփականատիրոջ անվանափոխության, նախագծային, շինարարական և այլ աշխատանքներ իրականացնելու նպատակով վարկային կազմակերպության կողմից տրվող տեղեկանքի (համաձայնության) համար, ինչպես նաև գրավի առարկայի հետ կապված այլ գործարքների դեպքում վճարվում է սակագին՝ 20000 ՀՀ դրամ(այդ թվում ԱԱՀ) :<br>• այլ ծառայություններ մատուցելու դեպքում՝ հասցեի փոփոխություն,նոր անձի հաշվառում և այլ վճարվում է սակագին 5000 ՀՀ դրամ (այդ թվում ԱԱՀ): |
| Վարկառուի կողմից պահանջվող փաստաթղթերը | Համաձայն «Անշարժ գույքի շինարարության կամ վերանորոգման նպատակով»կարգի հավելված 1-ի |
| Վարկի ձևակերպման վայր | ՀՀ, ք.Երևան, Չարենցի փող. 1Բ |
| Վարկի մարումը | Վարկի մարումը կատարվում է՝<br>**կանխիկ եղանակով**՝ անմիջապես վարկային կազմակերպության դրամարկղում<br>**անկանխիկ**՝ վարկային նշված վարկային կազմակերպության բանկային հաշիվներին **Telcell տերմինալների** և Telcell Wallet էլ. դրամապանակի միջոցով, ընտրելով վարկային կազմակերպությունների ցանկից «Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ-ն և մուտքագրելով Ձեր վարկային պայմանագրի առաջին էջում նշված վարկային կոդը |

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

- ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
- ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
- ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:
- «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:
- ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՅՍ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆ ՈՒՆԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ: ՈՒՍՏԻ, ՆԱԽԱՊԵՍ ԴԻՏԱՐԿԵՔ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԿԱ ՆՄԱՆԱՏԻՊ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԵՔ ՎԱՐԿԸ ՄԱՐԵԼՈՒ ՁԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:
- ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ **մինչև 15 միլիոն ՀՀ դրամ վարկերի դեպքում** ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
- Վարկառուի կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում վարկային կազմակերպությունն իրավունք ունի բռնագանձում տարածել գրավի առարկայի վրա և իրացնել այն: Գրավի առարկայի իրացումից ստացված գումարը վարկառուի պարտքը չծածկելու դեպքում մնացած գումարը կարող է մարվել վարկառուի **այլ գույքի բռնագանձման և իրացման հաշվին:**
- **Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:**

- Արտարժույթով տրամադրված վարկերի դեպքում միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով, վարկի տրամադրման օրվա դրությամբ վարկային կազմակերպության կողմից սահմանված փոխարժեքով:
- Հիփոթեքի պայմանագիրը պարտադիր վավերացվում է նոտարական կարգով:
- ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՌ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: *Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել մեր կայքի «Կարգավորում» բաժնի "Սպառողական կրեդիտավորման մասին" օրենքում: Անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել սպառողի գրավոր դիմումի հիման վրա կամ միակողմանի ֆինանսական կազմակերպության կողմից՝ ի օգուտ սպառողի:*
- Ձեզ հետաքրքրող համապատասխան ծառայության մասին տեղեկատվությունը կարող եք ստանալ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» www.fininfo.am ինտերնետային կայքից:
- ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՋԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:
- ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ (մինչև 15 մլն ՀՀ դրամ կամ դրան համարժեք ԱՄՆ դոլար) *առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում սպառողը պարտավոր է կրեդիտի գումարը օգտագործելու համար կրեդիտավորողին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են կրեդիտավորման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Կրեդիտավորման պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում սպառողից պահանջվել չի կարող: Սպառողն իրավունք ունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, թե ոչ:*
- *Սպառողն հնարավորություն ունի (մինչև 10 մլն ՀՀ դրամ կամ դրան համարժեք ԱՄՆ դոլար) պայմանագրից բխող բողոք-պահանջները «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն ներկայացնելու Ֆինանսական համակարգի հաշտարարին, որի* ինտերնետային կայքն է *fsm.am: Ընդ որում, Վարկային կազմակերպությունը կնքել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր:*
- ** Անուփտեր վարկի մարման եղանակի դեպքում յուրաքանչյուր ամիս հաշվարկվում է հավասար չափի գումար, որը կազմված է վարկի մայր գումարից և տոկոսագումարներից: Սակայն սկզբնական շրջանում այդ նույն չափի գումարի մեջ ավելի մեծ է տոկոսագումարների մեծությունը, փոքր է մարվող մայր գումարը: Ժամանակի ընթացքում այս բաշխումը փոքրանում է, այսինքն՝ մայր գումարի մեծությունը ամսական մարման մեջ մեծանում է, իսկ տոկոսագումարների մեծությունը փոքրանում է, սակայն ամսական վճարումները մնում են անփոփոխ:*
- *Գրավի գնահատման և գրավադրման հետ կապված ծախսերը կատարվում են վարկառուի (գրավատուի) կողմից: Ընկերությունը կարող է պահանջել նաև ապահովագրել գրավի առարկա հանդիսացող գույքը, որի հետ կապված ծախսերը իրականացվում է վարկառուի (գրավատուի)կողմից:*

** Գրավի գնահատման, նոտարական վավերացման, պետական գրանցման, ծախսերի գնային միջակայք.

| N | Ծառայության անվանումը | Մատուցվող ծառայության գնային միջակայք (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Անշարժ գույքի գնահատում | 5.000 - 15.000 |
| 2 | Գրավի պայմանագրի նոտարական վավերացում | 15.000 |
| 3 | Հիփոթեքի (անշարժ գույքի) գրավի պետական գրանցում | 36.700 |

• Երաշխավորության պայմանագրում երաշխավորը ձեռագրով նշում է. «Ես՝ (անուն, ազգանուն/անվանում ) երաշխավորում եմ (անուն, ազգանուն/անվանում) ----- --- գումարի պարտավորությունը և գիտակցում եմ, որ նրա կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում ես եմ դրանք կատարելու, վատանալու է իմ վարկային պատմությունը և հնարավոր է զրկվեմ իմ սեփական գույքից»:

## *Մեզ հետ համագործակցող անշարժ գույքի գնահատման և ապահովագրական գործակալությունների փվյալները՝*

***Գնահատող կազմակերպություններ.***

- «Օլիվեր Գրուպ» ՍՊԸ հասցե՝ ք. Երևան, Թումանյան 8, 215-216 սենյակ, հեռ. (010) 54-07-40, (010) 54-27-50, (010) 54-27-60,էլ. փոստ info@olivergroup.am
- «Ռիվալ Քոնսալթինգ» ՍՊԸ հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փող., փակուղի 8շ., հեռ. (010) 52-55-35, էլ. փոստ info@reeval.am
- Ափթայմ» ՍՊԸ հասցե՝ ք. Երևան, Եկմալյան 6, հարկ 3,հեռ. (060) 53-53-71, (098) 53-53-14, էլ. Փոստ info@uptimeiic.org
- «Կոստ Կոնսալտ» ՍՊԸ հասցե՝ ք. Երևան, Բուզանդի փող. 1-51, հեռ. (010) 54-48-82, էլ. փոստ cost@consultant.com
- «Արմէքս» ՍՊԸ հասցե՝ ք. Երևան, Նար-Դոսի փող., 69-3, հեռ. (091) 40-23-40, (098) 40-23-40,էլ. փոստ armexarmenia@mail.ru
- «Գառդի» ՍՊԸ հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 7 թիվ 4,հեռ. (091) 22-01-63,էլ. փոստ gardiltd@gmail.com
- «Շիրակամուտ» ՍՊԸ հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյանի 26/3հեռ. (011) 52-90-90 (093) 40-09-59
- «Օֆման Մորգիդջ Մոնսալթինգ» ՍՊԸ հասցե՝ ք. Երևան, Կողբացի 42շ, 37հեռ. (010) 53-71-79 (43) 53-71-79 էլ. փոստ ofmanmc@mail.ru

*Ապահովագրական կազմակերպություններ.*

- «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ հասցե՝ ք. Երևան, Հյուսիսային Պողոտա 1Հեռ.՝ +374 (10) 591-000
- «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ հասցե՝ ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք՝ 47, 48, 50 , հեռ.՝ +374 (10) 59-21-21
- «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 10, տարածք 110, «Պիացցա Գռանդե» Բիզնես Կենտրոն, հեռ.՝ +374 (10) 53-64-94
- «Ռեսո» ԱՓԲԸ հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 62, տարածք 93-93/1, հեռ.՝ +374 (60) 27-57-57

Հավելված 1

## Քաղվածքների տրամադրման պայմաններ

«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ յուրաքանչյուր ամսվա 16-ին անվճար էլեկտրոնային կապի միջոցով (mail) սպառողներին է ներկայացնում կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն:

Քաղվածքները և նրանց կրկնօրինակները սպառողների պահանջով տրամադրվում են ԱՆՎՃԱՐ:

Հավելված 2

***Վարկային գործի վերաբերյալ բացասական եզրակացության հիմքերն են.***

դիմելու պահին սպառողի ֆինանսական դրության վերլուծության արդյունքների
անհամապատասխանությունը սույն կարգի և այլ իրավական ակտերի չափանիշների,
. ներկայացված ծրագրի անբավարար շահութաբերությունը և բարձր ռիսկայնությունը,
. վարկի օգտագործման նպատակների թերհիմնավորումը,
. ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը,
. վարկի ապահովության անբավարար իրացվելիությունը,
. ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրի կողմից տրված բացասական վարկային պատմությունը,
. հաճախորդի գործունեությունից շրջակա միջավայրի աղտոտումը կամ վնասումը,
. այլ պատճառներ:

Մերժման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է գրավոր՝ մեկ օրվա ընթացքում:

*Սույն Տեղեկատվական ամփոփագրի պայմաններից տարբերվող վարկերը տրամադրվում են ընկերության Խորհրդի որոշմամբ:*

*Հավելված 3*

# ՑԱՆԿ

## Անշարժ գույքի կառուցապատման, վերակառուցման, վերանորոգման, բարեկարգման նպատակով տրամադրվող վարկերի անհրաժեշտ փաստաթղթերի

- Դիմում-հայտ:
- Անձնագրի և սոցիալական ապահովության քարտի պատճենները:
- Հաճախորդի հետ բնակվող (խնամակալության տակ գտնվող) անձանց անձնագրերի պատճենները:
- Տեղեկանք գրանցման (հաշվառման) և ընտանիքի կազմի վերաբերյալ՝ տրված իրավասու մարմնի (տեղական ինքնակառավարման մարմին, ԲՇՏ, Համատիրություն, Լիազոր ներկայացուցիչ և այլն) կողմից,
- Ամուսնության վկայականի պատճեն (ամուսնալուծված կամ ամուրի լինելու դեպքում՝ համապատասխանաբար ամուսնալուծության կամ մահվան վկայականների պատճենները):
- Տեղեկատվություն (պետ. ռեգիստրից, դեպոզիտարիայից, ռեեստրավարից) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում 10% և ավելի մասնակցության վերաբերյալ:
- Բանկերում ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին 6 ամսվա շրջանառության և մնացորդի վերաբերյալ:
- Տեղեկանք աշխատավայրից, որտեղ պետք է նշվի զբաղեցրած պաշտոնը և ամսեկան աշխատավարձի չափը և/կամ հայտարարություն եկամուտների վերաբերյալ (երբ Հաճախորդը և (կամ) երաշխավորը չեն աշխատում),
- Տեղեկություններ ընտանիքի անդամների եկամուտների վերաբերյալ,
- Վերանորոգվող անշարժ գույքի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր:
- Վերանորոգման աշխատանքների իրականացման ծախսերի նախահաշիվ:
- Այն դեպքում երբ որպես երաշխավոր հանդես է գալիս իրավաբանական անձ, ապա իրավաբանական անձին վերաբերվող փաստաթղթերը՝ հիմնադիր փաստաթուղթը (կանոնադրություն)՝ հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայական (իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը), ֆինանսական հաշվետվությունները և այլն:
- Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է վարկային կազմակերպությունը:

**Հաճախորդը պետք է ներկայացնի նշված փաստաթղթերի բնօրինակները կամ սահմանված կարգով վավերացված պատճենները:**